Մրցույթի հայտարարություն

Արագածոտնի մարզի «Ապարանի Հ.Ոսկանյանի անվան համար 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ Արագածոտնի մարզի «Ապարանի Հ.Ոսկանյանի անվան համար 2 հիմնակամ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.
2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարանի Հ.Ոսկանյանի անվան համար 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2022թ. մարտի 3-ից մինչև մարտի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ ապրիլի 7-ին՝ ժամը 14^{00}-ին,
Արագածոտնի մարզի Ապարանի Հ.Ոսկանյանի անվան համար 2 հիմնական դպրոցում,
ք.Ապարան, Մ. Բաղրամյան, փակուղի 2-րդ, շենք 1

Տեղեկությունների համար դիմել՝ 094224926, էլ. հասցե՝ aparan2@schools.am